

**1. Որտե՞ղ կարող եմ բողոքարկել տուգանքի վերաբերյալ որոշումը:**

- Տուգանքի վերաբերյալ որոշումը կարող եք բողոքարկել կամ (1) վերադաս մարմնում (բարձրաստիճան պաշտոնյայի մոտ) կամ էլ (2) անմիջապես շրջանային (քաղաքային) դատարանում<sup>1</sup>:

**2. Ո՞վ է բարձրաստիճան պաշտոնյա անձը:**

- Բարձրաստիճան պաշտոնյա անձ համարվում է ցանկացած անձ, որը պաշտոնապես ղեկավարում է ոստիկանության այն աշխատակցին, որը տուգանել է Ձեզ: Սակայն Ներքին գործերի նախարարը համարվում է բոլոր ոստիկանության աշխատակիցների բարձրաստիճան պաշտոնյա անձ, հետևաբար բողոքարկման գործընթացը ձեզ ավելի մատչելի լինելու համար, բողոքը կարող եք ներկայացնել անմիջապես նախարարի անունով:

**3. Ի՞նչ ժամանակահատվածում պետք է բողոքարկել տուգանքը, եթե բողոքարկում եմ դատարանում:**

- Եթե անմիջապես բողոքարկում եք դատարան, դուք բողոք ներկայացնելու վերջաժամկետ ունեք տուգանքի մասին որոշումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում<sup>2</sup>:

**4. Կարող ե՞մ դիմել դատարան արտակարգ դրության ժամանակ:**

- Այո, եթե դուք չեք ցանկանում օգտագործել բարձրաստիճան պաշտոնյա անձի մոտ բողոքարկելու իրավունքը և անմիջապես կդիմեք դատարան, ապա դուք պետք է դա անեք անկախ արտակարգ դրության ռեժիմի կարգավիճակից:

**5. Եթե դատարանը չբավարարի իմ բողոքը, ի՞նչ ժամանակահատվածում պետք է մուծեմ տուգանքը:**

---

1. Կրաստանի վարչական իրավախախտման օրենսգիրք, հոդված 272, մաս 1, ենթակետ „ա“  
2. Նույն օրենսգրքում, հոդված 273, մաս 1

- Դատարանի որոշումը ստանալուց 30 օրվա ընթացքում<sup>3</sup>: Տուգանքը վճարելու պարտականություն ունեք նույնիսկ այն դեպքում, չնայած նրան, արտակարգ դրությունը կլինի, թե ոչ ուժի մեջ:

**6. Ի՞նչ է նշանակում նշանակում տուգանքի վերաբերյալ որոշման հանձնումը:**

- Հանձնում նշանակում է փաստաթղթի փաստացի ընդունումը: Ոստիկանի կողմից այսպես կոչված տուգանքի ստացականը կստանաք տեղում:<sup>4</sup> Այն դեպքում եթե դուք հրաժարվում եք, որոշումից դա համեմայնդեպս համարվում է որոշումը հանձնած:

**7. Ի՞նչ ժամանակահատվածում պետք է բողոքարկեմ տուգանքը, եթե առաջին հերթին բողոքարկում եմ բարձաստիճան պաշտոնյայի մոտ:**

- Արտակարգ դրության ժամանակ այս ուղղությամբ տարբեր կանոններ են ընդունվել և դուք իրավունք ունեք տուգանքը արտակարգ դրության ավարտից հետո բողոքարկել,<sup>5</sup> 10 օրվա ընթացքում: Տուգանքը վճարելու պարտականությունը սկսվում է բողոքարկման ընթացակարգը ավարտվելուց հետո:

**8. Եթե բարձաստիճան պաշտոնյա անձը չբավարարեց իմ բողոքը, ի՞նչ կարող եմ անել լրացուցիչ:**

- Այս դեպքում իրավունք ունեք դիմել դատարան: Եթե առաջին ատյանի դատարանը (քաղաքային/շրջանային դատարան) չբավարարեց ձեր պահանջը, կարող եք դատարանի որոշումը վերաքննիչ դատարանում բողոքարկել և դրանով բողոքարկման ընթացակարգն ավարտվում է:

---

3. Նույն օրենսգրքում հոդված 290, մաս 1

4. Նույն օրենսգրքում հոդված 234<sup>1</sup>

5. Վրաստանի կառավարության 2020 թվականի մարտի 23 N181 հրամանագիր, հոդված 1, կետ 1. Արտակարգ դրության ժամանակ, Վրաստանի կառավարության 2020 թվականի մարտի 23 N181 հրամանագրին համաձայն, կասեցված է օրենսդրությամբ սահմանված վարչական բողոք ներկայացնելն ու դրանք քննարկման ժամկետները:

**9. Եթե չեմ պատրաստվում տուգանքը բողոքարկել, ե՞րբ պետք է վճարեմ այն:**

- Եթե չեք պատրաստվում տուգանքը բողոքարկել ոչ դատարանում ոչ էլ բարձրաստիճան պաշտոնյայի մոտ, ապա տուգանքը վճարելու հնարավորություն ունեք անմիջապես, սակայն, արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 30 օր հետո:

**10. Ո՞րն են թե ոչ փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունք:**

- Բողոքը ներկայացնելու և գործի քննության ժամանակ ունեք իրավունք օգտվել փաստաբանի ծառայություններից:<sup>6</sup> Բայց այն պահին երբ որ ոստիկանն ստանձնում է ձեր տուգանքի որոշումը, փաստաբանի բացակայությունը դա չի դադարեցնում ընթացակարգը և չի ներկայացնում խոչընդոտ Ձեզ տուգանելուն:

**11. Տուգանքների բողոքարկումը և վճարումը՝ վերևում նշված կանոնները գործում են միայն կարանտինի կամ մեկուսացման կանոնների խախտման դեպքում՞:**

- Այո, եթե դուք կատարել եք մեկ այլ վարչական իրավախախտում կամ հանցագործություն, կրելու եք լրացուցիչ պատասխանատվություն: Օրինակ, եթե դուք չեք հնազանդվել ոստիկանության օրինական պահանջներին՝ տուգանքի գործընթացում, ապա դա լրացուցիչ կհանգեցնի տուգանման կամ/և կարող է արդյունքում լինել բանտարկություն:

**12. Ե՞թե կարանտինի կամ մեկուսացման կանոնները կրկնակի խախտեմ, կրկին վարչական տուգանքի կենթարկվեմ:**

- Ոչ, այդ դեպքում ձեր հանդեպ կհարուցվի քրեական գործ: Կրկնվող գործողությունը պատժվում է ազատազրկմամբ: Այսօրվա դրությամբ, դրա համար նախատեսված է 3 տարի ժամկետով ազատազրկում:<sup>7</sup> Սակայն Կրաստանի խորհրդարանի կողմից քրեական իրավունքի օրենսգրքում մտցված փոփոխության համաձայն, մայիսի 2-ից հետո

---

6. Նույն օրենսգրքում հոդված 252, մաս 1

7. Կրաստանի նախագահի 2020 թվականի մարտի 23 N1 հրամանագիր, հոդված 8

կատարված նույն արարքի համար պատժվում է ազատազրկմամբ մինչև 6 տարի ժամկետով:<sup>8</sup> Սակայն, դա չի նշանակում այն, որ կանոնների կրկնակի խախտողը բոլոր անձիք ինքնաբերաբար պատժվում են բանտարկության առավելագույն ժամկետով (3 կամ 6 տարի), այդ գործը կուղարկվի դատարան, որն անհատական է քննարկվում ձեր կողմից կատարված գործողությունը, դրա ծանրացուցչության հանգամանքը, վտանգը, ձեր մեղավորությունը և համապատասխան որոշում կկայացնի, ներառյալ, ձեր մեղավորության հաստատման դեպքում դատարանը կքննարկի պատժ անհատական չափով:

---

8. Վրաստանի քրեական իրավունքի օրենսգիրք, հոդված 359<sup>1</sup>